ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

…… 2010 թվականի N ….. –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ «ՆԱԼԲԱՆԴ» ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԿԱՅԱՐԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՓԻՆՅԱՆԻ, ՀԱՅԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԵՎ ՍԱՄՎԵԼ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան, Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N1 հավելվածի N1 աղյուսակի 06-րդ բաժնի 01 խմբի 01 դասի «02. Բնակարանային շինարարություն» ծախսային ծրագրով նախատեսված միջոցների հաշվին ՀՀ Լոռու մարզի գյուղական բնակավայրերում իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցվող բնակելի տներից բնակելի տան հատկացմամբ լուծել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի «Նալբանդ» երկաթուղային կայարանի տարածքում բնակվող Հովհաննես Ափինյանի, Հայկ Մարգարյանի և Սամվել Պետրոսյանի ընտանիքների բնակարանային խնդիրները։

2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին՝ սույն որոշման 1-ին կետում նշված անձանց բնակելի տների հատկացման ժամանակ

ղեկավարվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N1337-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի դրույթներով։

ՀՀ քաղաքաշինության նախարար ***Վարդան Վարդանյան***

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք- Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ «ՆԱԼԲԱՆԴ» ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԿԱՅԱՐԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՓԻՆՅԱՆԻ, ՀԱՅԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԵՎ ՍԱՄՎԵԼ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. *<u>Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)</u>*

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի «Նալբանդ» երկաթուղային կայարանի տարածքում բնակվող Հովհաննես Ափինյանի, Հայկ Մարգարյանի և Սամվել Պետրոսյանի ընտանիքների բնակարանանին խնդիրները լուծելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը մշակվել է ի կատարումն Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2010 թվականի հունվարի 26-ի N01/22/372-10 հանձնարարականի համաձայն։

1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.

ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի Հ.Ափինյանի, Հ.Մարգարյանի և Ս.Պետրոսյանի ընտանիքների փաստաթղթային փաթեթների ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որ նշված ընտանիքները 1988 թվականի դեկտեմբերի 7-ի դրությամբ հանդիսացել են առանձին տնտեսություններ, ունեցել են առանձին բնակելի տներ, որոնք երկրաշարժի հետևանքով քանդվել են (հիմք՝ ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 23-ի N39 որոշում)։

Երկրաշարժից հետո նշված ընտանիքներին՝ որպես ծառայողական բնակարաններ, «Նալբանդ» երկաթուղային կայարանի արտադրական շենքում տրամադրվել են տարածքներ՝ ժամանակավոր բնակության համար։

ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N1337-Ն որոշմամբ հաստատված կարգով սահմանված ընթացակարգին համապատասխան Շիրակամուտ համայնքում իրականացվող երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, բնակարանային պայմանները բարելավման կարիք ունեցող ընտանիքների հաշվառման գործընթացի ժամանակ սահմանված ժամկետում նշված ընտանիքները դիմում չեն ներկայացրել և չեն ընդգրկվել համայնքի ղեկավարի կողմից 2008 թվականի դեկտեմբերի 15-ի դրությամբ հաստատված բնակարանային պայմանները բարելավելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակում։

Ներկայումս, խնդրո առարկա է դարձել «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերության կառավարման տակ գտնվող տարածքներում, այդ թվում «Նալբանդ» երկաթուղային կայարանի արտադրական շենքում բնակություն հաստատած անձանց վերաբնակեցման հարցը։

Այդ կապակցությամբ, անհրաժեշտություն է առաջացել լուծել Շիրակամուտ համայնքի «Նալբանդ» երկաթուղային կայարանի տարածքում բնակվող Հ.Ափինյանի, Հ.Մարգարյանի և Ս.Պետրոսյանի ընտանիքների բնակարանային խնդիրները։

1.2Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի «Նալբանդ» երկաթուղային կայարանի արտադրական շենքում բնակվող Հ.Ափինյանի, Հ.Մարգարյանի և Ս.Պետրոսյանի ընտանիքների բնակարանային խնդիրները առաջարկվում է լուծել ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի «Բնակարանային շինարարություն» ծրագրով նախատեսված միջոցների հաշվին ՀՀ Լոռու մարզի գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցվող բնակելի տներից բնակելի տան հատկացմամբ։

Ընդ որում, նշված անձանց բնակելի տների հատկացումը կիրականացվի Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N1337-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի դրույթների համաձայն։

<u>2. Կարգավորման առարկան՝</u> «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերության կառավարման տակ գտնվող ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի «Նալբանդ» երկաթուղային կայարանի տարածքում բնակվող

Հ.Ափինյանի, Հ.Մարգարյանի և Ս.Պետրոսյանի ընտանիքների բնակարանային խնդիրների լուծումն է։

3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.

Իրավական ակտի կիրառման արդյունքում ակնկալվում է Հ.Ափինյանի, Հ.Մարգարյանի և Ս.Պետրոսյանի ընտանիքների վերաբնակեցման միջոցով ազատել «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲ ընկերության կառավարման տակ գտնվող՝ ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի «Նալբանդ» երկաթուղային կայարանի արտադրական տարածքները։

ՀՀ քաղաքաշինության նախարար ***Վարդան Վարդանյան***